

# ՕՏԱՐՆԵՐԸ ՀԱՅԵՐԻ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

## ՀՈՒՆԱԿԱՆ ԹԵՐԹ ՄԸ ՀԱՅՈՑ ՄԱՍԻՆ

Պուենոս-Այրես հրատարակվող հունարեն «Բարբիս» շաբաթաթերթը բացառիկ թիվ մը*) (20 փետրվար 1948 թ.) հատկացուցած է Վարդանանց հիշատակին՝ պատկերազարդ և շքեղ տպագրությամբ։

Առաջին էջը ամբողջությամբ կպարունակե քաջն Վարդան Մամիկոնյանի նկարը՝ գունավոր տպագրությամբ, երկրորդ էջը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, իսկ երրորդը՝ Կիլիկիո Հայրապետին։ Շաբաթաթերթին մեջ կան նաև Երուսաղեմի և Կ. Պոլսո Պատրիարքներուն, Սսոյ և Էջմիածնի Հայրապետական Աթոռներուն, Մեծն Տիգրանի, Լևոն Բ թագավորի և այլոց նկարները։

Սույն շաբաթաթերթին մեջ «Հայաստանյայց Եկեղեցվո» պատմության և վարդապետության մասին շահեկան ուսումնասիրություն մը ունի կիպրահայ բանասեր Պ. Նուպար Մագուտյան։ Այս բացառիկին ծախքերը հոգացված են Պ. Տիգրան Սավալանի կողմե, որ թուն է հանգուցյալ հայտնի բանասեր Տիգրան Սավալանի, և որ 20 տարիներե ի վեր կբնակի Հարավային Ամերիկայի Պուենոս-Այրես քաղաքին մեջ։ Տիգրան Սավալան ևս սպաներեն լեզվով հոդված մը ունի այս թիվին մեջ հայ ազգի քաղաքական, կրոնական և գրական կյանքի և ստեղծագործության մասին։

Հայության անունին և վարկին համար պատվաբեր և օգտակար հրատարակություն մըն է ասիկա։ Պ. Նուպար Մագուտյան և Պ. Տիգրան Սավալան արժանի են ջերմ գնահատանքի։

(«Հասկ» մարտ 1948 թ.)

*) «Բարբիս» շաբաթաթերթի սույն բացառիկ թվի մեկ օրինակը ստացվել է նաև Մայր Աթոռում։